

ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանի ողջույնի խոսքը
ԻԿԲԱՆԵՏ-ի երևանյան կենտրոնի գործունեությանը և հայ-իտալական
գիտական համագործակցությանը նվիրված միջոցառման ժամանակ
(ՀՀ ԳԱԱ, 15.04.2019)

Հարգելի մասնակիցներ,

Ուրախ եմ ձեզ ողջունելու «Միացեք ԻԿԲԱՆԵՏ-ի գործունեությանը ռեյատիվիստական աստղաֆիզիկայի բնագավառում» խորագրով հայ-իտալական գիտության օր միջոցառման մեկնարկի առիթով:

ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի համար միջազգային ասպարեզում համագործակցային կապերի խթանումը օրակարգային հարցերից է, և անհրաժեշտ եմ համարում փաստել, որ ԻԿԲԱՆԵՏ միջազգային կազմակերպության հետ համագործակցությունը այդ բնագավառում մեր ստացված ծրագրերից մեկն է:

2016 թվականին Ազգային ժողովի կողմից վավերացված համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունում հիմնադրվեց Ռեյատիվիստական աստղաֆիզիկայի կենտրոնների միջազգային ցանցի (ԻԿԲԱՆԵՏ) կենտրոն: Դեռ այն ժամանակ կենտրոնի ստեղծումը շատ կարևորվեց մեր կողմից, և դա ուներ իր պատճառները: Նախ՝ Հայաստանում, ընդհանրապես, աստղաֆիզիկական հետազոտությունները միշտ եղել են բարձր մակարդակի վրա՝ պայմանավորված Վիկտոր Համբարձումյանի մեծ ավանդով: Բացի այդ, Կենտրոնը հնարավորություն էր ստեղծում խթանել Հայաստանի և Իտալիայի գիտնականների միջև ակտիվ համագործակցությունը՝ ռեյատիվիստական աստղաֆիզիկայի ոլորտում համատեղ գիտական հետազոտություններ իրականացնելու, փոխադարձ այցելությունների, ինչպես նաև՝ միջազգային գիտաժողովներ և երիտասարդ գիտաշխատողների համար ամառային դպրոցներ կազմակերպելու միջոցով:

Եվ այսօր ուրախությամբ կարող ենք նշել, որ կենտրոնն իր գործունեությամբ կայացել է, ինչը փաստում են արձանագրված արդյունքները:

ԻԿԲԱՆԵՏ հայաստանյան կենտրոնը, օգտագործելով փորձարարական և տեսական աստղաֆիզիկայի ոլորտներում Հայաստանում առկա գիտական հետազոտությունների լավագույն փորձը, իրականացնում է ուսումնասիրություններ ժամանակակից աստղաֆիզիկայի ամենաարդիական և ամենաարագ զարգացող ուղղություններով,

ինչպիսիք են ռեյաստիվիստական աստղաֆիզիկան, բարձր էներգիաների աստղաֆիզիկան և աստղամասնիկային ֆիզիկան:

ԻԿԲԱՆԵՏ-ի մյուս ողջունելի ձեռքբերումը, որի մասին հարկ էմ համարում խոսել, դա կենտրոնի աշխատանքներում երիտասարդների ներգրավվածության բարձր մակարդակն է, երիտասարդ գիտնականներին ընձեռնված միջազգային համագործակցության հնարավորությունը, ինչը ևս շատ կարևորվում է գիտության ոլորտում մեր կողմից իրականացվող ծրագրերում:

ԻԿԲԱՆԵՏ Հայաստան կենտրոնի առկայությունը կարևորվում է նաև միջազգային համագործակցության բնագավառում նրա տված արդյունքներով: Կենտրոնն ակտիվ մասնակցում է Միավորված Ազգերի Կազմակերպության Բաց Տիեզերք («Open Universe») նախաձեռնության աշխատանքներին, որին պաշտոնապես 2017 թ.-ից սատարում է նաև Հայաստանի Հանրապետությունը: ԻԿԲԱՆԵՏ-ը տարբեր երկրներում պարբերաբար կազմակերպում է սեմինարներ և գիտաժողովներ, որոնց մասնակցում են հազարավոր գիտնականներ: Հենց այս միջոցառումն էլ, որը նվիրված է հայ-իտալական գիտական համագործակցությանը, ԻԿԲԱՆԵՏ-ի կողմից Հայաստանում կազմակերպած թվով երկրորդ միջոցառումն է: Ընդհանրապես, այսօրինակ միջոցառումները միտված են միջազգային փոխշահավետ համագործակցությունը խրախուսելուն և մասնագիտական հարթակ ստեղծելուն:

Հարգելի գործընկերներ,

թույլ տվեք մեկ անգամ ևս ողջունել բոլորիս միջոցառման կապակցությամբ և մաղթել արդյունավետ և հաճելի աշխատանքային օր:

Մամվել Հարությունյան